ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/23

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «**Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 13.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Պաշտպանության նախարարությունը, հրատապ բաց մրցույթի հանձնաժողովի 04.12.2017թ թիվ 1 որոշման համաձայն, «լվացքի հավաքման ծառայությունների» ձեռքբերման նպատակով, կազմակերպել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնման առարկան խմբավորված է եղել 6 չափաբաժնում, որոնցից 3-ին՝ այդ թվում 3-րդ չափաբաժնին, իր մասնակցությունն է բերել նաև «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն»):

Բացի Ընկերությունից գնման առարկայի 3-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել նաև «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ն, որի հայտը ևս մերժվել է:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար առավել ցածր գնային առաջարկը ներկայացված է եղել Ընկերության կողմից:

Գնման առարկայի 3-րդ չափաբաժնի վերաբերյալ՝ համաձայն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի 20.12.2017թ նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի և Հավելված 1-ի՝ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, մասնակցի կողմից ներկայացված հայտի ապահովման (կանխիկ փողի անդորրագրի ձև) ՀՎՀՀ դաշտում առկա են ավել նիշեր, ինչի արդյունքում Ընկերության հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է, իսկ հայտը համարվել է հրավերի պայմաններին չհամապատասխանող:

Ըստ էության հայտը հրավերի պայմաններին անհամապատասխան է համարվել այն պատճառով, որ հայտի ապահովման անդորրագրում Ընկերության ՀՎՀՀ-ի թվերի առջև առկա են եղել թվեր՝ 99:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի 20.12.2017թ նիստի թիվ 3 արձանագրության մասին Ընկերությունը տեղեկացվել է միայն 30.01.2018թ:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի 20.12.2017թ նիստի թիվ 3 արձանագրության նույն 2.3 կետում նշված է, որ. «Ա/Ձ Աբգար Ավետիսյանի կողմից ներկայացված հայտի ապահովումը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատել է ընկերության տնօրենի կողմից լիազորված անձը: Հետագա ռիսկերից խուսափելու նպատակով (հայտի ապահովում գանձելու խնդիր առաջանալու դեպքում) գնահատող հանձնաժողովը 11.01.2018թ. որոշեց նիստը կասեցնել և դիմել մասնակիցներին սպասարկող բանկերին և խնդրել տրամադրել տեղեկատվություն առ այն, թե լիազորված անձի կողմից վավերացված էլ. ստորագրությամբ վճարման փաստաթղթերը արդյոք ենթակա են վճարման բանկի կողմից՝ նման պահանջ առաջանալու դեպքում: Սակայն, քանի որ, 24.01.2018թ. դրությամբ բանկի կողմից ոչ մի պատասխան չի ստացվել, գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել պատվիրատուի ղեկավարին: 24.01.2018թ. պատվիրատուի ղեկավարի կողմից ստացված հանձնարարականին համապատասխան գնահատող հանձնաժողովը շարունակեց սույն ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների հայտերի գնահատումը և Ա/Ձ Աբգար Ավետիսյանի հայտը գնահատել հրավերի պայմաններին համապատասխան:»:

Ընկերությունը ողջամտորեն ենթադրում է, որ գնահատող հանձնաժողովի 11.01.2018թ. կատարված գործողությունը վերաբերվել է նաև Ընկերության հայտին, սակայն

անհասկանալի պատճառներով տվյալ գործունեության արդյունքի մասին որևէ տեղեկություն մեզ հայտնի չէ, այդ իսկ պատճառով Ընկերությունը ստիպված է եղել ինքնուրույն կատարել որոշակի հարցումներ:

Ի պատասխան Ընկերության գրավոր հարցմանը «Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերության կողմից դրա վերաբերյալ՝ 05.02.2018թ տրվել է հետևյալ պատասխանը. «...«Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում սպասարկվող թիվ ... բանկային հաշվից 19.12.2017թ-ին «Գնումների մասին» օրենքով մասնակիցներից հայտի ապահովման թիվ ... հաշվին կատարված 13433248.00 ՀՀ դրամ փոխանցումը կազմվել և ուղարկվել է ՀՀ ԿԲ Նախագահի ֆինանսական հաղորդագրությունների էլեկտրոնային նոր ֆորմատների հաստատման վերաբերյալ 27.07.1999թ. թիվ 710 որոշման պահանջներին համապատասխան, մասնավորապես, փոխանցման հանձնարարականում ՀՎՀՀ-ից առաջ նշվել է 99 տարածքային երկնիշ կոդը:»

Ի պատասխան Ընկերության լրացուցիչ հարցմանը, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից՝ 07.02.2018թ. տրվել է հետևյալ պատասխանը. «Ի պատասխան Ձեր դիմումի հայտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուղարկված որևէ հարցում կապված «Սելենա-Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից կատարված փոխանցման մեջ ՀՎՀՀ-ի դաշտում գրված 99 նիշի մասին կամ այլ ձևակերպմամբ, 20.12.2017թ.-02.02.2018թ. ժամանակահատվածում «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում չի ստացվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի մաս 1-ի և մաս 3-ի 1)-ին կետի.

Հոդված 46. Բողոքարկելու իրավունքը.

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) եւ որոշումները:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝.

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Հաշվի առնելով սույն բողոքում ներկայացված փաստերն ու հանգամանքները, Ընկերության կարծիքով գնահատող հանձնաժողովի գործողությունները, մասնավորապես Ընկերության կողմից ներկայացված հայտի մերժումը, համարելով, որ նրա հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին միայն այն հիմքով, որ հայտի ապահովման

(կանխիկ փողի անդորրագրի ձև) ՀՎՀՀ դաշտում առկա են 99 նիշեր, չի կարող համարվել օրինական և իրավաչափ:

Փաստացի, այն հիմքը որով Ընկերության հայտը գնահատման հանձնաժողովի կողմից համարվել է հրավերի պայմաններին չհամապատասխանող չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից, բնականաբար և գնահատող հանձնաժողովի դիրքորոշումը ենթակա է վերանայման:

Բացի այդ, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.24 կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:»

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.25 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.24 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:»:

Այս առումով կարծում ենք, գնահատող հանձնաժողովը պարտավոր էր կատարել վերոհիշյալ գործողությունները պարզելու համար Ընկերության կողմից ներկայացված հայտի հրավերի պահանջների համապատասխանության հարցը: Պետք է նշենք, որ գնահատող հանձնաժողովը կարծես թե նշել է թե այդպիսի, որոշակի գործողություններ է կատարել, սակայն, ըստ էության, որևէ փաստ այդ մասին, գոնե մեզ, հայտնի չեն և փաստորեն գնահատող հանձնաժողովը ցուցաբերել է անգործություն, ինչի արդյունքում Ընկերությունը անհիմն կերպով զրկվել է մրցույթում հաղթող ճանաչվելու լեգիտիմ իրավունքից:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վացքի հավաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպած ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում գնահատող հանձնաժողովի կայացված որոշումը

(գործողությունը, անգործությունը) փոփոխել (վերանայել) և տվյալ գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊ Ը-ին:

Խորհրդի նիստերին մասնակցում էին «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի տնօրեն Անուշ Ղազարյանը և Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Տաթև Խաչատուրյանն ու Արթուր Այվազյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.02.2018թ. թիվ ԴՎԱ/666 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանի որ տուժանքի վճարման հանձնարարականում ՀՎՀՀ-ի դաշտում առկա է եղել ավելորդ նիշ:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Սելենա Սերվիս» ՍՊԸ-ի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.02.2017թ. թիվ ԴՎԱ/666 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթ հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, «Սելենա Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից 05.02.2018թ. տրված տեղեկանքը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը լվացքի հավաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի կողմից 20.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով Հանձնաժողովը անդորագրի ձևով) ՀՎՀՀ դաշտում առկա են ավելի նիշեր:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է մերժել «Սելենա Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընկերությունը Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ հայտով ներկայացրել է հայտի ապահովումը՝ կանխիկ փողի անդորագրի ձևով, սակայն Հանձնաժողովը հայտերի բացման նիստի արդյունքում որոշել է «Սելենա Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժել այն պատճառաբանությամբ, որ վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովման անդորրագրում ՀՎՀՀ-ի թվերի առջև առկա են եղել ավելի նիշեր, մինչդեռ Ընկերությունը հարցում է կատարել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին և վերջինիս կողմից ստանացել է պատասխան այն մասին, որ հայտի ապահովման անդորրագրում ՀՎՀՀ-ից առաջ նշված 99 թիվը հանդիսանում է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի տարածքային երկնիշ կոդը:

Բողոքի քննության նպատակով 16.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Ընկերությունը Խորհրդին ներկայացրեց «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի 05.02.2018թ. թիվ 141-08/32 գրությունը: «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ն «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին նշված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում սպասարկվող թիվ 163003601107 բանկային հաշվից 19.12.2017թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքով մասնակիցների հայտի ապահովման թիվ 900008000466 հաշվին կատարված 13433248.00 ՀՀ դրամ փոխանցումը կազմվել և ուղարկվել է ՀՀ ԿԲ Նախագահի՝ ֆինանսական հաղորդագրությունների էլեկտրոնային նոր ֆորմատների հաստատման վերաբերյալ 27.07.1999թ. թիվ 710 որոշման պահանջներին համապատասխան, մասնավորապես, փոխանցման հանձնարարականում ՀՎՀՀ-ից առաջ նշվել է 99 տարածքային երկնիշ կոդ:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով

առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Խորհուրդն արձանագրում է, որ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հայտի ապահովման անդորրագրում ՀՎՀՀ-ի թվերի առջև առկա են եղել ավելի նիշեր:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման անդորրագրում ՀՎՀՀ-ից առաջ նշված «99» նիշը հանդիսանում է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի տարածքային երկնիշ կոդը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին ներկայացված հայտի ապահովման անդորրագրում ՀՎՀՀ-ից առաջ ավել նիշերի առկայության հիմնավորմամբ Ընկերության հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի 13.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել Հանձնաժողովին՝ ընդունել «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1 ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ